

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության իր լիազորությունների սահմաններում 2017 թվականի երկրորդ եռամսյակում կատարված աշխատանքների մասին**

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարման ընթացքը
1	<p><b>ՀՀ տրանսպորտային տեսչության իրավասության սահմաններում թեմատիկ ստուգումների կազմակերպում և իրականացում, տրանսպորտի բնագավառին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում:</b></p>	<p><b>Ընթացիկ</b></p>	<p>ՀՀ տրանսպորտային տեսչության պետի 184 հանձնարարականների համապատասխան, Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնողների նկատմամբ կիրառվել են վերահսկողական գործառույթներ, արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել են վերահսկողական արդյունքների ամփոփման 1826 արձանագրություններ: ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել է 21.210.370 դրամ:</p> <p>Միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացի նկատմամբ իրականացված գործառույթների արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել են վերահսկողության արդյունքների ամփոփման 51 արձանագրություն:</p> <p>ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից կատարված վերահսկողական գործառույթների ընթացքում կանոնավոր և տաքսի փոխադրումների երթուղիներում, ինչպես նաև միջքաղաքային և միջպետական երթուղիների ուղևորների վաճառքի հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել են թվով 1762 վերահսկողության արդյունքների ամփոփման արձանագրություններ:</p> <p>ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի</p>

			<p>Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1810-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1644-Ն որոշման պահանջների համաձայն իր իրավասության սահմաններում իրականացվել է ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի մասին ՀՀ օրենսդրությամբ պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն, կազմվել են վերահսկողության արդյունքների ամփոփման թվով 13 արձանագրություն:</p> <p>ՀՀ տրանսպորտային տեսչության աշխատակիցների կողմից իրականացվել են վերահսկողական գործառույթներ Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննություն իրականացնող կայաններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, տրվել պարտադիր կատարման ցուցումներ:</p> <p>Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի թիվ 641-Ն, 2004 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 1678-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2240-Ն որոշումների պահանջներով՝ ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից իրականացվել է հաշվառման ենթակա ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական մեքենաների և մեխանիզմների, ջրային, տրանսպորտային միջոցների կադաստրի վարումը՝ արդյունքում հաշվառվել են 44 միավոր ինքնագնաց ճանապարհաշինարարական տրանսպորտային միջոց, իսկ հաշվառումից հանվել են 2 միավոր ինքնագնաց ճանապարհաշինարարական տրանսպորտային միջոցներ:</p>
2,	<p><b>Սահմանված կարգով փաստաթղթաշրջանառության իրականացում:</b></p>	<p><b>Ընթացիկ</b></p>	<p>2017 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում էլեկտրոնային ու թղթային եղանակով սահմանված կարգի պահանջներով ստացվել են 7124 և ուղարկվել՝ 1851</p>

			գրություն:
3,	<b>Այլ ընթացիկ աշխատանքներ և հանձնարարականներ:</b>	<b>Ընթացիկ</b>	<p>ՀՀ օրենսդրության պահանջները խախտողներին տեղեկացվել է կայացված որոշումների, ինչպես նաև վարչական տույժերի չափերի մասին և առաջարկվել սահմանված ժամկետներում դրանք վճարել ՀՀ պետական բյուջե: Վերջիններիս կողմից պահանջը սահմանված ժամկետում չկատարողների մասով թվով 207 համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն:</p>
4,	<b>Չպլանավորված աշխատանքներ:</b>	<b>Ընթացիկ</b>	<p>ՀՀ պետական բյուջեի գանձումները ապահովելու նպատակով ՀՀ տրանսպորտային տեսչության կողմից կազմակերպվել են հանդիպումներ այն կազմակերպությունների ղեկավարների հետ, որոնք սահմանված ժամկետներում նշանակված վարչական տույժերը չեն վճարել:</p>

ՀՀ տրանսպորտային տեսչության պետ՝

Ա. ԱՄԾԱՏՐՅԱՆ